

---

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ  
ՍՈԼՎԵՆԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՄԻՆՉԵՎ  
«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ՄԵԿՆԱՐԿԸ

ՄՇԵՐ ՀԱԿՈՒՅԱՆ

Ներածություն

Սառը պատերազմի ավարտից հետո ժողովրդավարության տարածումը դարձավ ԵՄ-ի ու ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության առանցքային դրույթներից մեկը: Եվրոպական ինստիտուտների ընդլայնումը խթանեց արևմտաեվրոպական մոդելին համապատասխան քաղաքական, տնտեսական ու սոցիալական փոխակերպումների երկարատև գործընթացը<sup>1</sup>: Ժողովրդավարության տարածումը նաև դարձավ ԵՄ-ի ու ԱՄՆ-ի զարգացման և համագործակցության ծրագրերի գլխավոր բաղադրիչը<sup>2</sup>:

ԵՄ-ն սկսեց որոշակի ակտիվություն ցուցաբերել հետխորհրդային տարածքի երկրներում՝ նախաձեռնելով համագործակցության տարաբնույթ ծրագրեր: Թեև ԵՄ-ի և հետխորհրդային երկրների միջև 1990-ական թվականների համագործակցությունը տնտեսատեխնիկական բնույթ ուներ, սակայն դա հետագա քաղաքական համագործակցության հիմք էր նախապատրաստում:

2004 թ. 10 պետություններ (որոնց մեծ մասը նախկինում ԽՍՀՄ ազդեցության ներքո էր) անդամակցեցին ԵՄ-ին՝ այդպիսով ընդլայնելով վերջինիս արտաքին սահմանները դեպի արևելք: Այս նոր իրողությունից ելնելով՝ ԵՄ-ն հիմնեց Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ), որն էլ դարձավ հարևան երկրների հետ քաղաքատնտեսական գործակցության ծրագրերի իրականացման կարևոր հարթակ: Այդ երկրները բաժանվում են երկու խմբի՝ արևելքում՝ հետխորհրդային երկրներ (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան, Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա), հարավում՝ Մերձավոր Արևելքի ու Հյուսիսային Աֆրիկայի երկրներ (Ալժիր, Եգիպտոս, Իսրայել, Լիբանան, Լիբիա, Մարոկկո, Պաղեստին, Սիրիա, Թունիս):

---

<sup>1</sup> Տե՛ս **Sadurski W.**, Accession's Democracy Dividend: The Impact of the EU Enlargement upon Democracy in the New Member States of Central and Eastern Europe, *European Law Journal*, 2004, Vol. 10 (4), էջ 371-401:

<sup>2</sup> Տե՛ս **Zanger S. C.**, Good Governance and European Aid: The Impact of Political Conditionality, *European Union Politics*, 2000, Vol. 1 (3), London, էջ 293-317:

## **Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հարաբերությունները ԵՄ-ի հետ մինչև ԵՀՔ մեկնարկը**

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում առկա էին բազմաթիվ խնդիրներ, այդ թվում՝ քաղաքական անկայունություն, տնտեսական ճգնաժամ, քաղաքացիական չափազանց թույլ հասարակություն և այլն: Սակայն երեք երկրների համար առաջընթացը կասեցնող գլխավոր խնդիրը էթնոքաղաքական հակամարտություններն էին: Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի և Հարավային Օսիայի, ինչպես նաև Մերձդնեստրի ու Գագաուզիայի հիմնահարցերը էապես դանդաղեցնում էին այդ երկրների սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացումը:

Անկախության առաջին տարիներին երեք երկրները չունեին ձևավորված արտաքին քաղաքականություն, և նրանց միջազգային կապերը հիմնականում պայմանավորված էին արտաքին ուժերի նախաձեռնողականությամբ: 1990-ական թթ. սկզբներին ԵՄ ակտիվությունը Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում սահմանափակվում էր տրանսպորտի, էներգետիկայի և այլ ոլորտներում տեխնիկական աջակցությամբ, որի շրջանակներում, 1991 թ. սկսած, իրականացվում էր TACIS (Technical Assistance to the Commonwealth of Independent States and Georgia) ծրագիրը: - Վերջինս, սակայն, համագործակցության թույլ կազմակերպական հիմքեր ուներ, քանի որ այն ոչ թե երկկողմանի գործընկերություն էր ԵՄ-ի և հետխորհրդային նշված երկրների միջև, այլ ԵՄ միակողմանի օգնություն այս երկրներին անցում կատարելու շուկայական տնտեսության<sup>3</sup>: Հարաբերությունների բնույթը էապես փոխվեց 1990-ական թթ. վերջին, երբ ուժի մեջ մտան հետխորհրդային 9 երկրների (Ռուսաստան, Ուկրաինա, Մոլդովա, Հայաստան, Ադրբեջան, Ղազախստան, Ղրղզստան, Վրաստան, Ուզբեկստան) հետ կնքված Գործընկերության ու համագործակցության համաձայնագրերը (ԳՀՀ)<sup>4</sup>, որոնք փաստորեն սկզբնավորեցին քաղաքական հարաբերություններ ԵՄ-ի ու հետխորհրդային երկրների միջև:

«Եվրոպային մոտենալու» տեսանկյունից, ԳՀՀ-ներից բացի, շատ կարևոր էր նաև Մոլդովայի, Վրաստանի ու Հայաստանի անդամակցությունը Եվրոպայի խորհրդին (ԵԽ) (համապատասխանաբար՝ 1995, 1999 և 2001 թթ.): ԵԽ-ն չափազանց կարևոր դեր ունի ԵՄ հարևան երկրներում այնպիսի եվրոպական արժեքների տարածման գործում, ինչպիսիք են մարդու իրավունքներն ու օրենքի գերակայությունը: Ընդ որում, սովորաբար ԵՄ-ի ու ԵԽ-ի նպատակները շատ մոտ են և լրաց-

<sup>3</sup> Տե՛ս Եվրահանձնաժողովի մամլո հաղորդագրությունների շտեմարան, [http://europa.eu/rapid/press-release\\_MEMO-92-54\\_en.htm](http://europa.eu/rapid/press-release_MEMO-92-54_en.htm), մատչելի էր 01.08.2017:

<sup>4</sup> Այս համաձայնագրերի նպատակը շահառու երկրներում ժողովրդավարության և շուկայական տնտեսության զարգացումն է բազմազան ոլորտներում համագործակցության ու քաղաքական երկխոսության միջոցով (տե՛ս ԵՄ իրավական և այլ հանրային փաստաթղթերի պաշտոնական կայք, <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=LEGISSUM:r17002>, մատչելի էր 01.08.2017):

նում են իրար: Հետևաբար Հայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի անդամակցությունը ԵՄ-ին կարևոր քայլ էր նաև ԵՄ-ի հետ հարաբերությունների սերտացման ճանապարհին:

### **Հայաստանը, Վրաստանը և Մոլդովան ԵՀՔ մաս.**

#### **Եվրոպականացումը 2004-2009 թթ.**

Միննույն ժամանակ, 2000-ականների սկզբին ԵՄ-ն զբաղված էր Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի մի քանի երկրներում քաղաքական անցմանն ու ժողովրդավարության կառուցմանն աջակցելով: Բարեփոխումների երկարատև գործընթացից հետո 10 երկրներ<sup>5</sup>, բավարարելով Կոպենհագենյան չափանիշները, դարձան ԵՄ անդամներ, ինչը նշանակալիորեն փոխեց ԵՄ-ն ներսից ու դրսից: Գլոբալ անվտանգությունը դարձավ ԵՄ գործառնական առանցքային հայեցակետը: Մասնավորապես, 2003 թ. դեկտեմբերին ընդունվեց Եվրոպական անվտանգության ռազմավարությունը (ԵԱՌ)՝ *«Անվտանգ Եվրոպա ավելի լավ աշխարհում»* խորագրով<sup>6</sup>: Այն սահմանում էր ԵՄ-ի որպես համաշխարհային խաղացողի դերը և առանձնացնում էր ԵՄ-ի գործառնական առաջնահերթությունները, այդ թվում՝ հարևան տարածաշրջաններում անվտանգության կառուցումը: Փաստաթղթում մասնավորապես նշվում է. *«Անգամ համաշխարհայնացման դարաշրջանում աշխարհագրությունը կարևոր է: Եվրոպայի շահերից է բխում, որ իր սահմանին գտնվող երկրները լինեն լավ կառավարվող: (...) Մեր խնդիրն է խթանել ԵՄ արևելքում ու Միջերկրական ծովի սահմաններին լավ կառավարվող երկրների շրջանակի ստեղծումը, որոնց հետ մենք կարող ենք հաստատել համագործակցային սերտ հարաբերություններ»*<sup>7</sup>:

ԵԱՌ-ի ընդունումից ընդամենը մի քանի ամիս առաջ՝ 2003 թ. մարտին, Եվրահանձնաժողովը հրապարակել էր *«Ավելի լայն Եվրոպա՝ հարևանություն. մեր արևելյան ու հարավային հարևանների հետ հարաբերությունների նոր շրջանակ»* վերտառությամբ հաղորդագրությունը՝ ուղղված ԵՄ խորհրդին ու Եվրախորհրդարանին<sup>8</sup>, որը շեշտում էր 2004 թ. մայիսի 1-ից (նշված 10 երկրների՝ ԵՄ-ին պաշտոնապես միանալու օրը) հետո ԵՄ արտաքին սահմաններն ապահովելու անհրաժեշտությունը, ինչպես նաև դիտարկում այդ պահին ԵՄ անդամակցության հավակնություն չունեցող երկրների հետ հարաբերությունների սերտացումը<sup>9</sup>: Այս փաստաթղթում ԵՄ արևելյան հարևաններ

<sup>5</sup> Էստոնիա, Լատվիա, Լեհաստան, Լիտվա, Կիպրոս, Հունգարիա, Մալթա, Չեխիա, Սլովակիա, Սլովենիա:

<sup>6</sup> Տե՛ս «A Secure Europe in a Better World: European Security Strategy», 12 December 2003, Brussels, <https://www.consilium.europa.eu/uedocs/cmsUpload/78367.pdf>, մատչելի էր՝ 10.08.2017:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 7:

<sup>8</sup> Տե՛ս «Wider Europe – Neighbourhood: A New Framework for Relations with our Eastern and Southern Neighbours», Communication from the Commission to the Council and the European Parliament, 11 March, 2003, Brussels, [http://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/pdf/com03\\_104\\_en.pdf](http://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/pdf/com03_104_en.pdf), մատչելի էր՝ 10.08.2017:

<sup>9</sup> Տե՛ս «Wider Europe — Neighbourhood: A New Framework for Relations with our Eastern and Southern Neighbours», էջ 4:

Էին համարվում Ռուսաստանն ու, այսպես կոչված, արևմտյան նորանկախ պետությունները (Western Newly Independent States)՝ Ուկրաինան, Մոլդովան և Բելառուսը, որոնք աշխարհագրորեն սահմանակից էին դառնում ԵՄ-ին: Մինչդեռ Հարավային Կովկասի երկրները, տեղադրությամբ պայմանավորված, դուրս էին մնում այս նախաձեռնության աշխարհագրական շրջանակից<sup>10</sup>: Սակայն 2003 թ. նոյեմբերին Վրաստանում տեղի ունեցած «Վարդերի հեղափոխությունն» էապես փոխեց ինչպես իրերի դրությունը տարածաշրջանում, այնպես էլ ԵՄ մոտեցումը այդ երկրին: ԵՄ-ն սկսեց Հարավային Կովկասի խնդիրները դիտարկել սեփական քաղաքական հետաքրքրությունների շրջանակում: Այս փոփոխությունը տեղ գտավ նաև ԵԱՌ-ում, որտեղ նշվում է. «*Հիմա\* մենք պետք է ավելի շահախնդիր լինենք Հարավային Կովկասի խնդիրների նկատմամբ, որը ևս շուտով կլինի հարևան տարածաշրջան*»<sup>11</sup>: ԵՄ-ի ընդլայնված հետաքրքրվածությունը Հարավային Կովկասով արտահայտվեց նաև 2004 թ. հուլիսին ընդունված «*Եվրոպական հարևանության քաղաքականության ռազմավարական փաստաթղթում*», որում նշվում է. «*Եվրոպական միությունը խորապես հետաքրքրված է Հարավային Կովկասում կայունությամբ ու զարգացմամբ: (...) Եվրահանձնաժողովը (...) ԵՄ խորհրդին հորդորում է ընդունել որոշում Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը Եվրոպական հարևանության քաղաքականությունում ընդգրկելու մասին*»<sup>12</sup>: Բացի ժողովրդավարացումից, մարդու իրավունքների պաշտպանությունից, հակամարտությունների կարգավորումից և այլն, Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի հետ հարաբերությունների ընդլայնման համար կարևոր գործոն է համարվում նաև էներգետիկ ոլորտում համագործակցությունը, քանի որ «*Հարավային Կովկասը կարևոր տարածաշրջան է էներգիայի թե՛ արտադրման (Գասպյան ավազան), թե՛ փոխադրման առումով*»<sup>13</sup>:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը:

\* Այս պարագայում «հիմա»-ն, ամենայն հավանականությամբ, վերաբերում է 2003 թ. նոյեմբեր-դեկտեմբեր մեկամսյա ժամանակահատվածին, ինչը հուշում է, որ «Վարդերի հեղափոխությունն» այնքան նշանակալի իրադարձություն էր, որ ընդամենը մեկ ամսվա ընթացքում ԵՄ-ն նման կարևոր փաստաթղթում համապատասխան հավելում կատարեց Հարավային Կովկասի նկատմամբ որդեգրվելիք քաղաքականության վերաբերյալ:

<sup>11</sup> Տե՛ս «A Secure Europe in a Better World: European Security Strategy», էջ 8: Այստեղ հավանաբար նկատի է առնվում այն, որ 1999 թ. սկսած Թուրքիան համարվում էր ԵՄ-ին լիարժեքորեն անդամակցելու թեկնածու պետություն, ինչի իրագործման պարագայում Հարավային Կովկասի երկրներն արդեն աշխարհագրորեն կսահմանակցեին ԵՄ-ին: Այս գործոնը, փաստորեն, առկա էր ԵԱՌ ընդունումից դեռևս մի քանի տարի առաջ, ինչը վերստին հուշում է, որ Հարավային Կովկասով ԵՄ-ի հանկարծակի հավելյալ հետաքրքրության իրական պատճառը ոչ թե Թուրքիայի հնարավոր անդամակցությունն էր (որը կարող էր պահանջել երկար տարիներ, ինչպես և եղավ), այլ մեկ ուրիշ գործոն, սվյալ պարագայում՝ քաղաքական փոխակերպման սկիզբը Վրաստանում:

<sup>12</sup> «European Neighbourhood Policy Strategy Paper», Communication from the Commission, 2004, Brussels, էջ 10, [http://trade.ec.europa.eu/doclib/docs/2004/july/tradoc\\_117717.pdf](http://trade.ec.europa.eu/doclib/docs/2004/july/tradoc_117717.pdf), մատչելի էր՝ 10.08.2017:

<sup>13</sup> «European Neighbourhood Policy Strategy Paper», էջ 11: Այս հավելումով ԵՄ-ն հիմնավորում էր Հարավային Կովկասի երկրների հետ հարաբերությունների բազմակողմ-

Չնայած ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի դիտարկմանը, թե ԵՄ-ն աստիճանաբար մտնում է Ռուսաստանի «գերակա շահերի» գոտի<sup>14</sup>, Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը ևս ընդգրկվեցին ԵՀՔ-ում, ինչով փաստորեն մեկնարկեց ԵՄ արտաքին կառավարման ամենահավակնոտ ծրագիրը: Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրներին հաջողությամբ ԵՄ լիարժեք անդամների փոխակերպելուց հետո ԵՄ-ն սկսեց կիրառել նոր մոտեցում՝ վերափոխել այդ երկրների քաղաքական համակարգը առանց ԵՄ-ին անդամակցության հեռանկարի<sup>15</sup>: Այս քաղաքականությունը կարելի է բնութագրել տեսական երկու փոխկապակցված հասկացությունների միջոցով՝ «արտաքին կառավարում» և «եվրոպականացում»:

Սանդրա Լավենեքսն ու Ֆրանկ Շիմմելֆենիգն 2009 թ. հրապարակած իրենց հոդվածում<sup>16</sup> նշում են, որ որոշ գործոններ, մասնավորապես՝ անդամակցության արժեզրկումը, ԵՄ «ինտեգրացիոն ներուժի» թուլացումը և այլն, կարող են ԵՄ-ին ստիպել այլևս չկիրառել ընդլայնումը որպես հարևան երկրների հետ շփման գործիք: Այս գործոնների ազդեցությունը հստակորեն արտացոլվում է 2004 թ. հետո ԵՄ-ի վարած քաղաքականությունում: Արևելյան ընդլայնումը, լինելով չափազանց լայնածավալ (ԵՄ անդամ պետությունների թիվը գրեթե կիսով չափ ավելացավ), միևնույն ժամանակ ԵՄ-ին տեղափոխեց նոր իրականություն, որտեղ անհրաժեշտ էր սահմանազատում կատարել ԵՄ-ի ու ոչ ԵՄ-ի միջև: Այս նոր իրավիճակում ԵՄ-ն պետք է կիրառեր արտաքին կառավարման այնպիսի գործիքներ, որոնք թույլ կտային սեփական նորմերն ու սկզբունքները «արտահանել» հարևան երկրներ: ԵՀՔ-ում ներառված հետխորհրդային երկրները, դուրս լինելով «եվրոպական» սահմաններից, սկսեցին ԵՄ-ի կողմից ենթարկվել «եվրոպականացման», որն էլ հենց արտաքին կառավարման այն գործիքն էր, որը ԵՄ-ն հետևողականորեն կիրառեց ԵՀՔ մեկնարկից սկսած:

Եվրոպականացման ընդհանուր սահմանում գոյություն չունի: Այս առումով ուշագրավ է Կլաուդիո Ռադաելլիի սահմանումը. *«Եվրոպականացումը պաշտոնական ու ոչ պաշտոնական կանոնների, ընթացակարգերի, քաղաքական կուրսի հարացույցների, ոճերի, գործողության ձևերի և ընդհանուր համոզմունքների ու նորմերի (ա) կառուցման, (բ)*

---

մանիությունը՝ միաժամանակ ապահովագրելով իրեն այն հնարավոր քննադատությունից, թե տարածաշրջանով հետաքրքրությունը պայմանավորված էր բացառապես Վրաստանում արևմտամետ կառավարության ձևավորմամբ, ինչը կարող էր առաջացնել Ռուսաստանի անհանդուրժողական վերաբերմունքը, մինչդեռ նշված բոլոր փաստաթղթերում վերջինս համարվում էր ԵՄ-ի սերտ գործընկեր:

<sup>14</sup> Տե՛ս «Интервью Дмитрия Медведева российским телеканалам», Официальный сайт Президента России, 31.08.2008, <http://kremlin.ru/events/president/transcripts/1276>, մասշեյի էր 11.08.2017:

<sup>15</sup> Տե՛ս **Simão L.**, The problematic role of EU democracy promotion in Armenia, Azerbaijan and Nagorno-Karabakh, *Communist and Post-Communist Studies*, 2012, Vol. 45 (1-2), էջ 193-200:

<sup>16</sup> Տե՛ս **Lavenex S., Schimmelfennig F.**, EU rules beyond EU borders: theorizing external governance in European politics, *Journal of European Public Policy*, 2009, Vol. 16 (6): European Union External Governance, էջ 791-812:

միախառնման ու (զ) իրականացման գործընթաց է: Դրանք նախ սահմանվում ու ամրակայվում են ԵՄ քաղաքականության իրականացման գործընթացներում, իսկ հետո՝ հարմարեցվում (շահառու պետությունների – Մ. Հ.) ներքին դիսկուրսին, ինքնությանը, քաղաքական կազմակերպություններին ու հանրային քաղաքականության սկզբունքներին»<sup>17</sup>: Ըստ էության, եվրոպականացումը կոնստրուկտիվիստական դիսկուրս է, որտեղ եվրոպացիները փոխազդեցության արդյունքում իրենք իրենց վերափոխում են քաղաքական դերակատարների, իսկ Եվրոպան քաղաքական տարածության<sup>18</sup>:

Եվրոպականացման գործընթացի իրականացման համար Ֆ. Շիմմելֆենիգն առաջարկում է նորմերի միջազգային տարածման երկու մոդել՝ արտաքին խթաններ (external incentives) և սոցիալական ուսուցում (social learning)<sup>19</sup>, իսկ Մ. Էմերսոնն ու Գ. Նուշևան՝ ռացիոնալ ինստիտուցիոնալիզմ և սոցիոլոգիական ինստիտուցիոնալիզմ<sup>20</sup>: Ընդ որում՝ այս գործընթացում կիրառվող ամենատարածված ռեսուրսը պայմանականությունն է, այսինքն՝ ԵՄ-ից տրվող աջակցության կախվածություն շահառու երկրի ստանձնած պարտավորությունների կատարումից: Եվ թեև ԵՀՔ ռազմավարական փաստաթղթում նշվում է, որ ԵՄ-ն գործընկեր պետություններին չի պարտադրում նախապես սահմանված գերակայություններ, սակայն այդ հարաբերություններում ԵՄ-ն դոմնոր է, իսկ գործընկեր պետությունը՝ ստացող, որը նշանակում է, որ ԵՄ-ն է սահմանում «խաղի կանոնները» (առաջարկվող օգուտները, ակնկալվելիք գործողությունները և այլն), և եթե գործընկերները չեն բավարարում պայմանները, ԵՄ-ն իրավասու է դանդաղեցնել առաջընթացը կամ կասեցնել ֆինանսական օժանդակությունը: ԵՄ-ն այդպիսով օգտագործում է իր ներուժը՝ որոշելու եվրոպականացման էությունը<sup>21</sup>: ԵՀՔ ռազմավարական փաստաթղթում Եվրահանձնաժողովը նաև հայտնում է իր մտադրությունը՝ տարբերակելու իր հարաբերությունները ԵՀՔ երկրների հետ՝ կախված առաջադրված նպատակ-

<sup>17</sup> Տե՛ս **Radaelli C.M.**, Whither Europeanization? Concept stretching and substantive change, European Integration online Papers (EIoP), 2000, Vol. 4 (8), էջ 4:

<sup>18</sup> Տե՛ս **Bélangier M.**, Europeanization as a Foundation of the European Construction, in Europeanization and European Integration: From Incremental to Structural Change, Coman R., Kostera T. and Tomini L. (Eds.), Palgrave Macmillan, London, 2014, էջ 30:

<sup>19</sup> Տե՛ս **Schimmelfennig F.**, The International Promotion of Political Norms in Eastern Europe: A Qualitative Comparative Analysis, Jean Monnet/Robert Schuman Paper Series, 2005, Vol. 5 (28), էջ 1:

<sup>20</sup> Տե՛ս **Emerson M., Noutcheva G.**, Europeanisation as a Gravity Model of Democratisation, Herald of Europe, 2005, № 2, էջ 6:

<sup>21</sup> Տե՛ս **Anastasakis O.**, The Europeanization of the Balkans, The Brown Journal of World Affairs, 2005, Vol. 12 (1), էջ 83: ԵՄ գերիշխող դիրքի ամենացայտուն օրինակ է այն, որ թեև ԵՀՔ-ում ընդգրկված հետխորհրդային պետությունների մեծամասնությունը նախկինում ցանկություն էր հայտնել անդամակցելու ԵՄ-ին, սակայն թե՛ ԵՀՔ ռազմավարական փաստաթղթում, թե՛ առանձին պետությունների հետ կնքված Գործողությունների ծրագրում նշվում է, որ ԵՄ անդամակցություն չի նախատեսվում, և ոչ մի պարագայում դրանք չեն առաջարկվելու:

ների կատարման առաջընթացից<sup>22</sup>: Սա ի սկզբանե ԵՀՔ-ի հիմքում դրեց զարգացման տարբեր տեմպերի գաղափարը: Այս սկզբունքը հայտնի է «ավելին ավելիի դիմաց» (“more for more”) անվանմամբ: Իհարկե, գործընկեր պետությունները նույնպես կարող են հրաժարվել ԵՄ-ի կողմից առաջարկվող օգուտներից, ինչպես եղավ 2013 թ., երբ Հայաստանը հրաժարվեց ստորագրել Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը: Սրա վերաբերյալ՝ հարկ է նշել, որ եվրոպականացումը կիրառվում է ոչ միայն հարևան, այլև անդամակցության թեկնածու համարվող պետությունների հետ հարաբերություններում: Այս դեպքում այն կարելի է բնորոշել որպես ԵՄ-ականացում: Թեկնածու պետությունների պարագայում պայմանականության սկզբունքը սովորաբար ավելի արդյունավետորեն է կիրառվում, քան ԵՀՔ երկրների, քանի որ դրանք ունեն ավելի մեծ ակնկալիքներ ԵՄ-ից (գլխավորապես անդամակցությունը) և չունեն ավելի տեսանելի այլընտրանք, հետևաբար՝ առավել պատրաստակամ են ընդունելու ԵՄ-ի առաջարկած «խաղի կանոնները»: Մինչդեռ անդամակցության հեռանկարի բացակայությունը ԵՀՔ երկրներում կարող է հանգեցնել ԵՄ նորմերի վարանդական ընդունման կամ ընդհանրապես չընդունման:

Հայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի պարագայում շատ կարևոր է հաշվի առնել ԵՄ-ի ու նրա առաջարկած փոփոխությունների համապատասխանությունը տվյալ երկրի իշխանությունների քաղաքական համոզմունքներին ու ընկալումներին: Այլ կերպ ասած՝ ԵՄ-ի կողմից ժողովրդավարության տարածումը մեծապես կախված է տվյալ պետության համար դրանից ստացվելիք օգուտների ու վնասների հարաբերակցությունից<sup>23</sup>, ինչի համար կարևոր «խայծ» կարող է լինել ԵՄ անդամակցությունը: Ս. Փոլին ԵՀՔ-ում ընդգրկված հետխորհրդային երկրները բաժանում է երկու խմբի՝ կախված պետությունների արտաքին քաղաքական օրակարգում ԵՄ-ին անդամակցությանը հատկացված տեղից<sup>24</sup>: Ըստ այսմ՝ առաջին խմբում ներառվում են Մոլդովան, Վրաստանը և Ուկրաինան, որոնք հստակորեն հայտարարել են ԵՄ-ին անդամակցելու իրենց ձգտման մասին, երկրորդում՝ Հայաստանը, Ադրբեյջանն ու Բելառուսը, որոնք կա՛մ ընտրողական մոտեցում ունեն ԵՄ-ի հետ համագործակցության նկատմամբ, կա՛մ ընդհանրապես հետաքրքրված չեն դրանով: Հենց սրանով էլ պայմանավորված՝ առաջին խմբի երկրներում եվրոպականացումը կարող է խթանվել տեղի կառավարությունների կողմից, երկրորդ խմբի երկրներում՝ ԵՄ-ի<sup>25</sup>: Սակայն

<sup>22</sup> Տե՛ս «European Neighbourhood Policy Strategy Paper», էջ 8:

<sup>23</sup> Տե՛ս **Schimmelfennig F., Engert S., Knobel H.**, Costs, Commitment and Compliance: The Impact of EU Democratic Conditionality on Latvia, Slovakia and Turkey, *Journal of Common Market Studies*, 2003, Vol. 41 (3), էջ 495–518:

<sup>24</sup> Տե՛ս **Polli S.**, The European Neighbourhood Policy: Differentiation without Political Conditionality?, *Yearbook of Polish European Studies*, 2015, Vol. 18, էջ 139-148:

<sup>25</sup> Տե՛ս **Schimmelfennig F.**, Europeanization beyond Europe, *Living Reviews in European Governance*, 2012, Vol. 10 (1), էջ 5-31:

ԵՄ-ն փաստորեն իր արևելյան հարևաններից և ոչ մեկին չի առաջարկում անդամակցություն՝ անկախ ԵՀՔ շրջանակում արձանագրած առաջընթացից, ինչը կարող է առաջին խմբի երկրներին հիասթափեցնել, երկրորդին՝ անտարբեր թողնել: Այնուամենայնիվ, թեև անդամակցության հեռանկարի բացակայությունը կարող է մասամբ բացատրել ԵՀՔ-ի ընդհանուր անարդյունավետությունը, սակայն չի կարող հիմնավորել, թե ինչու որոշ երկրներ ժողովրդավարացման ավելի բարձր արդյունքներ են արձանագրել, քան մյուսները<sup>26</sup>: Ուստի անհրաժեշտ է յուրաքանչյուր երկրի օրինակը դիտարկել առանձին:

2006 թ. ընդունվեց ԵՄ-Հայաստան Գործողությունների ծրագիրը (ԳԾ), որը ճանապարհային քարտեզ ապահովեց ԵՀՔ-ին Հայաստանի մասնակցության համար ու մատնանշեց այն բարեփոխումներն ու իրավական մոտարկման գործընթացները, որոնք կհանգեցնեին ԵՄ ներքին շուկայում Հայաստանի «բաժնեմասի» ձեռքբերմանը<sup>27</sup>: ԳԾ-ում նաև նախատեսվում է ԵՄ-ի ակտիվ մասնակցություն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը ինչպես ԵԱՀԿ-ի հետ սերտ համագործակցության, այնպես էլ հետագա ավելի խորը ներգրավվածության միջոցով<sup>28</sup>: ԵՄ-ն, չունենալով ռազմական միջամտության լծակներ, փորձում էր փափուկ ուժի կիրառման միջոցով դեր ունենալ հակամարտության կարգավորման գործում: Նախատեսվում էր նաև Եվրոպական հարևանության ու գործընկերության գործիքի (ԵՀԳԳ – European Neighbourhood and Partnership Instrument) միջոցով զգալի ֆինանսական աջակցություն ցուցաբերել ԳԾ-ով նախատեսված գործողությունների իրականացման համար: ԳԾ-ի հաստատումից կարճ ժամանակ անց 2007 թ. փետրվարի 7-ին, ընդունվեց ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը, որտեղ նշվում էր, որ ԵՄ-ի հետ սերտ հարաբերությունների հաստատումը բխում է Հայաստանի Հանրապետության երկարաժամկետ շահերից<sup>29</sup>: ԵՄ-ին նման կարևորություն հատկացնելը թերևս պայմանավորված էր նրանով, որ ցածր գին վճարելով՝ Հայաստանը կարող էր ստանալ սոցիալ-տնտեսական առաջընթացի հնարավորություն: Բացի այդ, ԵՀՔ-ով նախատեսված գործողությունները համատեղելի էին Ռուսաստանի հետ գործող դաշնակցային հարաբերություններին:

Վրաստանի պարագայում ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացումն անմիջականորեն պայմանավորված էր ներքաղաքական տեղաշարժերով: 2003 թ. «Վարդերի հեղափոխության» արդյունքում տա-

<sup>26</sup> Տե՛ս **Börzel T., Lebanidze B.**, The transformative power of Europe beyond enlargement: the EU's performance in promoting democracy in its neighbourhood, *East European Politics*, 2017, Vol. 33 (1), էջ 17:

<sup>27</sup> Տե՛ս «European External Action Service», EU / Armenia Action Plan, 14.11.2006, էջ 6, [https://eeas.europa.eu/sites/eeas/files/armenia\\_enp\\_ap\\_final\\_en.pdf](https://eeas.europa.eu/sites/eeas/files/armenia_enp_ap_final_en.pdf), մատչելի էր՝ 14.08.2017:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 3:

<sup>29</sup> Տե՛ս «ՀՀ նախագահի հրամանագիրը ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189>, մատչելի էր 14.08.2017:



պավելեց Էդուարդ Շևարդնաձեի վարչակարգը, և իշխանության եկավ «Միացյալ ազգային շարժում» կուսակցությունը՝ Միխեիլ Սասկաշվիլիի գլխավորությամբ, ով 2004 թ. նախագահական ընտրություններում Վրաստանի գրեթե ողջ բնակչության (96%) աջակցությամբ հաղթանակ տարավ և անմիջապես հայտարարեց ԵՄ-ի ու ՆԱՏՕ-ի հետ խորը հարաբերություններ հաստատելու մտադրության մասին: Սասկաշվիլիի արտաքին քաղաքական կուրսը հավանության էր արժանանում Վրաստանի բնակչության կողմից՝ առաջին հերթին պայմանավորված ներքին բարեփոխումներով (կոռուպցիայի դեմ պայքար, օտարերկրյա ուղղակի ներդրումների ավելացում, Աջարիայում Ասլան Աբաշիձեի իշխանության տապալում և այլն), թեև ժողովրդավարության ամրակայմանն ուղղված քայլերն այնքան էլ նկատելի չէին, քանի որ քաղաքական դաշտը բևեռացված էր, իսկ ընդդիմությունը նվազագույն չափով էր ներկայացված խորհրդարանում<sup>30</sup>: Այնուամենայնիվ, հաշվի առնելով Վրաստանում եվրոպամետ քաղաքական ուժի ի հայտ գալն ու դրանից բխող հնարավորությունները, ԵՄ-ն Վրաստանին առաջարկեց համագործակցության ավելի լայն հնարավորություններ, քան Հայաստանին: Դրանցից էին պաշտպանական քաղաքականության ու էներգետիկայի ոլորտում կապերի ընդլայնումը, ԵՄ-ի ու Վրաստանի միջև մարդկանց տեղաշարժի ազատականացման վերաբերյալ երկխոսությունը և այլն<sup>31</sup>: Ինչ վերաբերում է Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտություններին, ապա այս դեպքում ևս ԵՄ-ն ակնհայտորեն չէր պաշտպանում կողմերից որևէ մեկին, սակայն ԳԾ-ում նշվում էր, որ դրանք Վրաստանի ներքին խնդիրներն են, և դա որոշակիորեն իր ցույց էր դնում ԵՄ-ի աջակցությունը Վրաստանի տարածքային ամբողջականությանը<sup>32</sup>: Հաշվի առնելով Ռուսաստանի հետ խիստ լարված հարաբերությունները (հատկապես 2006-2007 թթ. ճգնաժամից հետո) ու ԱՄՆ-ի հետ տարածաշրջանային ինտեգրման անհնարինությունը՝ ԵՄ-ն Վրաստանի համար ամենանպատակահարմար արտաքին ուժն էր, ինչն էապես նպաստեց հարաբերությունների խորացմանը:

Մոլորվայում ԵՄ ներկայությունը, թվում է, անխուսափելիորեն պայմանավորված է Ռումինիայի հետ աշխարհագրական ու մշակութային-լեզվական մերձավորությամբ<sup>33</sup>, սակայն ներքաղաքական իրավիճակը երբեմն ապացուցում է այս դատողության անկատարությունը: 2001 թ. խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարավ Մոլդովայի Հանրապետության Կոմունիստների կուսակցությունը (ՄՀԿԿ), որը երկրի նախագահ ընտրեց Վլադիմիր Վորոնինին: Կառավարման առաջին երկու տարիներին ՄՀԿԿ-ն վարում էր բացահայտ

<sup>30</sup> Տե՛ս **Simão L.**, նշվ. աշխ., էջ 196:

<sup>31</sup> Տե՛ս European External Action Service, EU / Georgia Action Plan, 14.11.2006, [https://eeas.europa.eu/sites/eeas/files/armenia\\_enp\\_ap\\_final\\_en.pdf](https://eeas.europa.eu/sites/eeas/files/armenia_enp_ap_final_en.pdf), մասնակցի էր՝ 14.08.2017:

<sup>32</sup> Տե՛ս «European External Action Service», EU / Georgia Action Plan:

<sup>33</sup> Տե՛ս **Emerson M., Noutcheva G.**, նշվ. աշխ., էջ 21:

ռուսամետ քաղաքականություն, սակայն հարաբերությունները ՌԴ-ի հետ կտրուկ լարվեցին 2003 թ. նոյեմբերին, երբ Ռուսաստանը փորձեց լուծում տալ Մոլդովայի ու Մերձդնեստրի միջև առկա հակամարտությանը՝ առաջարկելով 20 տարով ռուսական զորքեր տեղակայել Մոլդովայում<sup>34</sup>: Վորոնինը գիտակցեց, որ Ռուսաստանն ավելի մեծ վնաս կարող է հասցնել իր իշխանությանը, քան ԵՄ-ն<sup>35</sup>, ինչն էական փոփոխություններ առաջ բերեց Մոլդովայի արտաքին քաղաքականությունում: Մասնավորապես՝ ակտիվացան ռումինամետ ուժերը<sup>36</sup>, ինչպես նաև սերտացան հարաբերությունները ԵՄ-ի հետ, ինչը հետագայում նպաստեց Մոլդովայի սահուն ներգրավմանը ԵՀԲ-ում: Սակայն, լինելով ԵՀԲ-ում ներառված հետխորհրդային երկրներից ամենաաղքատը<sup>37</sup>, Մոլդովայի համար ԵՄ-ն նաև տնտեսական առաջընթացի կարևոր երաշխավոր էր: ԵՄ-Մոլդովա ԳԾ-ն, բացի ֆինանսական աջակցությունից, նախատեսում էր նաև Եվրահանձնաժողովի պատվիրակության շուտափույթ հիմնում և վիզայի ազատականացման քննարկումներ<sup>38</sup>: ԳԾ-ում Մերձդնեստրի հակամարտության լուծմանն առաջնային կարևորություն էր տրվում<sup>39</sup>, ուստի ԵՄ-ն աջակցում էր Մոլդովայում ժողովրդավարացման երկարաժամկետ գործընթացին՝ նպատակ ունենալով Մերձդնեստրի համար Մոլդովան դարձնել բարգավաճող, կայուն ու ավելի գրավիչ<sup>40</sup>: Այնուամենայնիվ, հաշվի առնելով նաև երկրի լիակատար կախվածությունը ռուսական էներգակիրներից, ինչպես նաև ՌԴ-ում բնակվող մեծաքանակ մոլդովացիների գործունե ու Ռուսաստանից ստացվող ֆինանսական հոսքերը՝ ՄՀԿԿ-ն փորձում էր հավասարակշռել հարաբերությունները վերջինիս հետ: Նշենք նաև, որ, ի տարբերություն - Լեռնային Ղարաբաղի, Մերձդնեստրի ինքնավարությունը Մոլդովան ճանաչել է և ավելի քիչ ռեսուրսներ կարող է կենտրոնացնել խնդրի կարգավորման վրա, քան Հայաստանը՝ ԼՂ-ի փաստացի կարգավիճակը պահպանելու, ինչը որոշակիորեն հեշտացնում է Մոլդովայի եվրոպականացումը:

### Եզրակացություն

ԵՀԲ-ի շրջանակներում Հայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի

<sup>34</sup> Տե՛ս «Меморандум Козака»: Российский план объединения Молдовы и Приднестровья», 23.05.2003, <https://regnum.ru/news/458547.html>. մասնեի է՝ 04.08.2017:

<sup>35</sup> Տե՛ս **March L., Herd G.**, Moldova Between Europe and Russia: Inoculating Against the Colored Contagion?, Post-Soviet Affairs, 2006, Vol. 22 (4), էջ 369:

<sup>36</sup> Անկախացումից հետո Մոլդովայի կառավարությունը փորձում էր հեռանալ Ռումինիայից. անգամ 1994 թ. Սահմանադրությունում երկրի պետական լեզու է համարվում մոլդովերենը, ոչ թե ռումիներենը: Մոլդովայի Հանրապետության Սահմանադրությունը տե՛ս <http://lex.justice.md/viewdoc.php?action=view&view=doc&id=311496&lang=2>, մասչելի էր՝ 04.08.2017:

<sup>37</sup> Համեմատության համար նշենք, որ Համաշխարհային բանկի 2002 թ. տվյալներով Հայաստանը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշով կրկնակի գերազանցում էր Մոլդովային (տե՛ս «European Neighbourhood Policy Strategy Paper», Communication from the Commission. 2004. Brussels. էջ 30):

<sup>38</sup> Տե՛ս «European External Action Service». EU / Moldova Action Plan. 14.11.2006, [https://eeas.europa.eu/sites/eeas/files/armenia\\_enp\\_ap\\_final\\_en.pdf](https://eeas.europa.eu/sites/eeas/files/armenia_enp_ap_final_en.pdf), էջ 3, մասչելի էր՝ 14.08.2017:

<sup>39</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>40</sup> Տե՛ս **Del Medico N.**, A Black Knight in the Eastern Neighbourhood? Russia and EU Democracy Promotion in Armenia and Moldova, EU Diplomacy Papers, 2014, Vol. 7, էջ 24:

նկատմամբ ԵՄ-ի վարած քաղաքականության վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ ԵՀՔ-ում այս երեք երկրների ներառումը թեև հակասական էր, սակայն միևնույն ժամանակ բխում էր նրանց արտաքին քաղաքական առաջնահերթություններից: Այնուամենայնիվ, ԵՄ-ն շահառու երկրների առաջ որևէ պայման չէր դնում ԵՀՔ-ին մասնակցելու համար, այլ սկսում էր համագործակցություն առկա (միմյանցից տարբեր) պայմաններում, իսկ պետությունները կարող էին ԵՄ-ի հետ հարաբերությունները խորացնելու տարբեր շարժառիթներ ունենալ: Մասնավորապես՝ Վրաստանի եվրոպական ընտրությունը պայմանավորված էր գերազանցապես հակառուսական տրամադրությունների աճով, իսկ Մոլդովայում՝ նաև - Ռումինիայի հետ հարաբերությունների սերտացման հեռանկարով: Հայաստանի պարագայում գլխավոր շարժառիթը տնտեսական առաջընթացի հնարավորությունն էր, որը, սակայն, բավականին համեստ գործոն էր խորը ու բազմաշերտ հարաբերություններ հաստատելու համար:

ԵՀՔ շրջանակներում, մեծ հաշվով, ԵՄ-ն է որոշում հարաբերությունների բնույթը՝ հենվելով առկա հնարավորությունների վրա, սակայն միևնույն ժամանակ ԵՄ-ն չունի սեփական նորմերը կիրառելի դարձնելու արդյունավետ մեխանիզմներ, քանզի շահառու երկրները կարող են պարզապես դադարեցնել համագործակցությունը՝ առանց դրա համար «վճարելու»: Այսինքն՝ ԵՄ-ն որոշում է համագործակցության շրջանակը, շահառու երկրները՝ դրա համապատասխանությունը իրենց նախապատվություններին:

**Բանալի բառեր** - *Եվրոպական միություն, Եվրոպական հարևանության քաղաքականություն, Գործողությունների ծրագիր, արտաքին կառավարում, եվրոպականացում*

**МГЕР АКОПЯН – Европейский союз во внешнеполитической повестке Армении, Грузии и Молдовы до начала «Восточного партнёрства».** – В статье изучается динамика, с какой развивались отношения между Европейским союзом и тремя постсоветскими странами – Арменией, Грузией и Молдовой, а также особенности их вовлечения в европейскую политику соседства. Выясняется, насколько соответствует она внутри- и внешнеполитическим требованиям заинтересованных стран, а также демонстрируются основные механизмы трансформации и европеизации, применяемые Европейским союзом.

**Ключевые слова:** *Европейский союз, европейская политика соседства, план действий, внешнее управление, европеизация*

**MHER HAKOBYAN – The European Union in the Foreign Policy Agenda of Armenia, Georgia and Moldova before the Launch of the Eastern Partnership.** – The current article studies the nature and the dynamics of relations between the European Union and three post-Soviet countries, Armenia, Georgia and Moldova, after the collapse of the Soviet Union and their involvement in the European Neighbourhood Policy. In the article, it is attempted to uncover the compliance of the ENP with domestic and foreign political needs of the countries under consideration. Moreover, the article discusses the main mechanisms of transformation, i.e. Europeanization, implemented by the EU.

**Key words:** *European Union, European Neighbourhood Policy, Action Plan, external governance, Europeanization*